

Գալով մեր թիրքահայ եղբայրներին, նոցա մէջ չարաչար պայքար է մղւում ներկայումս յեղափոխական կուսակցութիւնների մէկ կողմից և խաղաղ յառաջադիմական կուսակցութիւնների մէջ միւս կողմից: Այդ պայքարը վերջերս արտայայտուել է միտտին-վային խնդրով, որ գաւառների եկեղեցիներում նոյն իսկ մի քանի գոհեր է տուել:

Միտտինգը, յայտնի է, այն քաղաքական ցոյցն է կամ հրապարակական բողոքը, որ ամբոխի կողմից արտայայտուել է հրապարակի վրայ և որին ներկայ են լինում շահագրգռուած ժողովուրդները ինչ ազգին էլ որ պատկանելիս լինին, և միտտինգներում ճառելու լեզուն էլ ըստ այնմ տարբեր է լինում:

Այստեղից հետևում է, որ միտտինգներ կարող են կազմուել չեղոք տեղերում կամ բաց հրապարակի վրայ, որ ոչ մի ազգի սեպականութիւնը չէ կազմում. բայց Տաճկաստանում Հայ յեղափոխականները ցանկանում են, որ այդ միտտինգները գումարուին անպատճառ հայ եկեղեցիներում:

Ազգիս վեհափառ կաթողիկոսն իմանալով այդ, մօտերս մի կոնդակ ուղղեց Կ. Պօլսի հայոց պատրիարքին, որով արգելում էր հայոց եկեղեցիներում միտինգներ գումարելը:

Սակայն յեղափոխականները բողոքեցին հայրապետական այդ կարգադրութեան դէմ և բռնի կերպով միտտինգներ գումարեցին հայ եկեղեցիներում, բայց այդտեղ արդէն դէմ կանգնեց խաղաղութեան սիրահար ժողովուրդը և ընդհարումներ տեղի ունեցան երկու կողմերի մէջ, որի ժամանակ եկեղեցիներում սպանուեցան մի քանի հոգի:

Հայոց եկեղեցին երբէք չէ արգելել ժողովներ կազմելը եկեղեցիներում իր սպասաւորների ընտրութեան համար, սկսած կաթողիկոսից մինչև վերջին տիրացուն, եկեղեցական—անտեսական և դպրոցական խնդիրների համար և այլն. և եթէ կուզէք, չէ արգելում նոյնպէս և միտինգներ գումարելը ազգային որեւէ աղէտի ժամանակ ձայն բարձրացնելու եկեղեցու և ժողովրդի իրաւանց պաշտպանութեան համար. բայց միայն ազդարաններին և ոչ թէ ամեն ազգի խաժամուժ ամբոխին, որով եկեղեցին կորցնում է իւր ազգային նշանակութիւնը:

Օրինակներ շատ կան այս մասին անցեալ պատմութեան մէջ:

Մենք դէմ չենք նոյն իսկ, որ հայերը, եթէ ցանկանում են, միտտինգներ գումարեն ամեն ազգութիւնների հետ միասին, միայն հայ եկեղեցուց դուրս: Փառք Ալլահին, Տաճկաստանում ազատ տեղիւր շատ կան դուրս համար: